

ԿԱՀԱՌ-ՔԻ ՀՈՐԹՄԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
ԵՎ ԴՐԱ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆ ԴԻՐՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ պաշտոնատար անձի կողմից շորթմամբ կաշառք ստանալու հանցագործության որակման որոշ հիմնախնդիրներին: Հոդվածում ներկայացվում է նշված հանցագործության քրեաիրավական գնահատականը, ՀՀ և ՌԴ դատական պրակտիկայից բերված օրինակների շրջանակներում, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության որակման առանձնահատկությունների համատեքստում ներկայացվում են առաջարկություններ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. պաշտոնատար անձ, կաշառք, շորթում, հանրորեն վտանգավոր արարք, պատասխանատվություն, խաբելություն, պատիժ:

ՀՀ քրեական օրենսգիրքը պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու հանցակազմի որակման շրջանակներում, որպես որակյալ հատկանիշ է նախատեսում պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը շորթման եղանակով [1, հոդվ. 311, մաս 3, կետ 1]: Առաջին հերթին պարզ թվացող այս դրույթը, իրականում խնդրահարույց է: Կաշառքի շորթման դեպքերով պրակտիկան ձևավորվել է դեռևս խորհրդային ժամանակներից, երբ դատարանները արարքը որակելիս հիմնվում էին ՌԴ դատական պրակտիկայի և ռուսական քրեական իրավունքի մեկնաբանությունների վրա: Նշված մոտեցումն արդեն ավանդույթ է ձևավորել, և կարծում եմ՝ կաշառքի շորթման դեպքերի բացահայտման սակավությունը հիմք չի ապահովում

վճռաբեկ դատարանների համար համապատասխան նախադեպ ստեղծելու հարցում: Կաշառքի շորթման վերաբերյալ Ցարական Ռուսաստանի և Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մոտեցումները տարբեր են այն տեսանկյունից, որ առաջինի դեպքում կաշառքի շորթումն առանձնացված էր որպես ինքնուրույն հանցագործություն և դրսևորվում էր «ֆիզիկական և հոգեբանական բռնությամբ», որը կիրառվել է պաշտոնատար անձի կողմից՝ օգտագործելով իր պաշտոնական դիրքը՝ տուժողից ապօրինաբար դրամ կամ այլ գույք ստանալու համար [2, էջ 276–395]:

Այստեղ հատկանշական է «տուժող» եզրույթը, դրա իրավաբանական նշանակության տեսանկյունից, այն որ կաշառքի շորթման դեպքում, պաշտոնատար անձին, նրա ապօրինաբար պահանջի արդյունքում դրամ կամ այլ գույք տրամադրող անձը չի դիտվում որպես կաշառատու այլ անձ:

Ինչևէ, մինչ կաշառքի շորթման հասկացության վերաբերյալ բովանդակային հետազոտություն անցկացնելը, հարկ ենք համարում ներկայացնել ՀՀ ներկա քրեական օրենսդրությունը՝ կաշառքի «կաշառքի շորթում» համատեքստում: Կարծում եմ, որ անհրաժեշտ է առաջին հերթին նշել, որ նշված հասկացությունը քրեական օրենսգրքում սահմանված չէ: Այստեղից հարց է ծագում. «տվյալ դեպքում ի՞նչ է նշանակում շորթում»:

Նկատենք, որ խնդրո առարկա հարցը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրեն-

քի իրավաչափության սահմաններում դիտարկելիս առաջանում են հակասություններ՝ կաշառքի շորթման հասկացության, արարքի որակման և օրենքի կիրառման ենթատեքստում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ» [3, հոդվ. 36, մաս 4]: Նշվածը հիմք ընդունելով՝ պետք է փաստենք, որ ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է շորթման հասկացությունն ընդհանրապես [1, հոդվ. 182, մաս 1]: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի վերը նշված կանոնների համաձայն՝ շորթման մասին ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված դրույթի տառացի մեկնաբանությունը, իմ կարծիքով, պետք է կիրառվի նաև կաշառքի շորթման դեպքում, որը բնականաբար հնարավոր է՝ հաշվի առնելով հանցագործության սուբյեկտի, ինչու էլ, նաև օբյեկտիվ կողմի որոշ բովանդակային տարբերությունները:

Նախ՝ փորձենք վեր հանել նշված հարցի վերաբերյալ համընդհանուր ընդունելի մոտցումները: Կաշառքի շորթումը նշանակում է պաշտոնատար անձի կողմից դրա ստացում այնպիսի իրավիճակում, երբ նա իր գործողություններով ոտնձգություն է իրականացնում «կաշառատուի» ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով պահպանվող որոշ իրավունքների նկատմամբ՝ ստիպելով նրան այդ կապակցությամբ կաշառք տալ: ՌԴ գերագույն դատարանի պլենումի 2000 թվականի փետրվարի 10-ի որոշման 15-րդ կետի համաձայն՝ «շորթում նշանակում է պաշտոնատար անձի կողմից կաշառքի պահանջ, որը կատարվել է այնպիսի գործողություններ կատարելու սպառնալիքով, որոնք կարող են վնաս պատճառել կաշառատուի օրինական

շահերին, կամ վերջինիս նկատմամբ այնպիսի պայմաններ դնել, որի պարագայում նա ստիպված է կաշառք տալ իր օրենքով պահպանվող շահերի համար վտանգավոր հետևանքների առաջացումը կանխելու նպատակով» [4, կետ 15]:

Քննարկվող հանրորեն վտանգավոր արարքի համատեքստում ներկայացնենք քրեական գործեր, որոնց վերաբերյալ կայացվել են համապատասխան վճիռներ թե՛ ՌԴ դատարաններում և թե՛ ՀՀ դատարաններում: Մեղադրյալ Կ-ին ավազակային հարձակման փոխարեն խուլիգանության համար մեղադրանք առաջադրելու և որպես խափանման միջոց կալանավորում չկիրառելու պատրվակով քննիչ Կ-ն պահանջել և ստացել էր կաշառք, որի համար վերջինս դատապարտվել էր շորթմամբ կաշառք ստանալու համար (ՌԴ քր. օր-ի 290 հոդ. 4 մաս «բ» կետ): Քննիչ Կ-ն գիտակցել է, որ մեղադրյալ 2-ի արարքում բացակայում են քրեական օրենսգրքով նախատեսված ավազակության հանցակազմի հատկանիշները և նրա արարքը խուլիգանություն է (արդյունքում 2-ն դատապարտվել է խուլիգանության համար): ՌԴ գերագույն դատարանի պլենումը իր որոշման մեջ նշել է, որ «քննիչ Կ-ի լիազորությունների մեջ մտնում էր մեղադրյալ Կ-ի արարքը, որպես խուլիգանություն որակելը, քննիչը չի գերազանցել ի ծառայողական պարտականությունները, նա չի պատրաստվել անօրինական գործողություններով վերադարձվել 2-ի արարքը», որի հիման վրա քննիչի կողմից կատարված արարքը վերադարձվել է որպես կաշառք ստանալը, քանի որ ինքը իրավասու էր որակել արարքը [5, էջ 760]:

Մեկ այլ դեպքում՝ ՀՀ ոստիկանության Նոր Նորքի ոստիկանության բաժնի օպերլիազոր Միեր Հովհաննիսյանը 2009 թվականի հուլիսի 2-ին բաժին բերման ենթարկված Ռուսաստանի Դաշնության Կիսլավոդսկ քաղաքում հետախուզման մեջ գտնվող Կամո Դյումինից

ՌԴ իրավապահ մարմինների կողմից նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի (ստորագրություն չհեռանալու մասին) պայմաններում, որի փաստը թաքուն պահելով, նրան կալանավորելու սպառնալիքով, պահանջել է խոշոր չափերով՝ 360.270 ՀՀ դրամին համարժեք 1.000 ԱՄՆ դոլար կաշառք:

Կամո Դյոմինը, պահանջվող գումարի կեսը վճարելով, մյուս կեսի համար պայմանավորվածություն է ձեռք բերել վճարել մեկ ամսվա ընթացքում: Այնուհետև չկարողանալով հայթայթել պահանջվող գումարը՝ դեպի մասին հայտնել է իրավապահ մարմիններին: Դատարանը վճռել է Միեր Մաքսիմի Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված հանցանքի՝ խոշոր չափերով և շորթմամբ կաշառք ստանալու համար [6]:

Իմ կողմից ներկայացված օրինակները առաջին հայացքից միանման էին, սակայն եթե խորությամբ վերլուծենք, կտեսնենք, որ առաջին օրինակում ՌԴ գերագույն դատարանի պլենումը հաշվի էր առել այն հանգամանքը, որ քննիչ K-ի վարույթում քննվում էր գործը, և նրա լիազորությունների շրջանակներում էին մեղադրյալի արարքի որակման և խափանման միջոց ընտրելու հետ կապված գործողությունները, որի հիման վրա նրա կողմից կատարված արարքը վերաորակվեց, իսկ Մ.Հովհաննիսյանի պարագայում՝ Կ.Դյոմինի վերաբերյալ գործը Մ.Հովհաննիսյանի վարույթում չի եղել, առավել ևս, եթե տվյալ գործերով առաջնայինը՝ էքստրադիցիայի հարցի լուծումն է: Մյուս կողմից՝ ինչպես երևում է դատավճռից, Կ.Դյոմինը չի իմացել, որ իր նկատմամբ, Ռուսաստանում խարդախության փաստով հարուցված քրեական գործով, «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոց է ընտրվել: Նշված հանգամանքը խոսում է այն մասին, որ Մ.Հովհաննիսյանը, տվյալ դեպքում, հանդես է եկել

«կարծեցյալ» իրավասու պաշտոնատար անձի դերում և խաբեությամբ, գործի իրական հանգամանքները թաքցնելով, գումար պահանջել, որի համար էլ նա դատապարտվում է շորթմամբ կաշառք ստանալու համար:

Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, որ պաշտոնատար անձը կաշառք է պահանջում թվացյալ օրինական գործողություններ կատարելու սպառնալիքով, բայց, ըստ էության, դրանք իրենցից հենց շորթում են ներկայացնում: Նման դեպքեր հատկապես հանդիպում են, երբ պաշտոնավոր անձին տրված է հայեցողական գնահատման իրավասություն, այսինքն՝ նշյալ իրավասությունների շրջանակում կարող է կայացնել այս կամ այն որոշումը, որը փաստացի օրինական կհամարվի, բայց բովանդակային կարող է հակասել այն անձի օրինական շահերին, որից կաշառք է պահանջվել: Օրինակ՝ իրենց իրավասությունների գործերով դատավորը, օրենքին համապատասխան բոլոր հանգամանքները վեր հանելով, իրավախախտման վերաբերյալ գործով ապացուցված համարելով անձի մեղավորությունը կարող է իր հայեցողությամբ՝ (ներքին համոզմունքի հիման վրա) կոնկրետ պատժամիջոց սահմանել քննարկվող հոդվածի սանկցիայի շրջանակում: Հիմք ընդունելով այն, որ միևնույն հանգամանքների պարագայում, երբ դատավորը, սպառնալով խիստ պատիժ նշանակել, կաշառք է պահանջում՝ խոստանալով այն մեղմացնել, ապա ենթադրվում է, որ նրա արարքում առկա է շորթման հանցակազմը: Նույն բանը կարելի է ասել այլ պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնց օրենքը վերապահել է հայեցողական գնահատման իրավասություն (իրավունք վերապահող փաստաթղթի տրամադրում, գրանցում և այլն):

Այսպիսով՝ ելնելով վերը նշված օրինակից և պրակտիկայից՝ կարելի է առանձնացնել պաշտոնատար անձի կողմից կաշառքի շորթման երկու եղանակ՝

1. կաշառք տալու ուղղակի պահանջ, որը միաժամանակ գուգորդված է կաշառատուի օրինական շահերին և իրավունքներին վնաս պատճառելու պաշտոնատար անձի սպառնալիքներով՝ գործողությամբ կամ անգործությամբ.

2. կառաքի շորթման քողարկված պահանջ, որի դեպքում պաշտոնատար անձը «կաշառատուին» դնում է այնպիսի վիճակում կամ նրան առաջադրում է այնպիսի պայմաններ, որի պարագայում անձը ստիպված է կաշառք տալ, որպեսզի խուսափի իր օրինական շահերի խախտումից:

Գործնականում կարծիք է ձևավորվել, որ չպետք է պաշտոնատար անձի կաշառք տալու պահանջը գնահատվի որպես շորթում, եթե գուգորդվել է կաշառատուի նկատմամբ օրինական գործողություններ կատարելու սպառնալիքով: Այս մոտեցումը, իմ կարծիքով, միանշանակ չի կարելի համարել, քանի որ օրենքում նշվում է պաշտոնատար անձի թե՛ օրինական և թե՛ անօրինական գործողությունների մասին:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կաշառքի շորթման հանցանշանի առկայությունը որոշելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե կարող են արդյո՞ք պաշտոնատար անձի գործողությունները կամ անգործությունը պատճառել վնաս կաշառատուի՝ օրենքով պահպանվող շահերին:

Հարկ է նշել, որ երբ պաշտոնատար անձը կաշառք է պահանջում՝ անօրինական գործողություններ կատարելու համար, օրինակ՝ համապատասխան հիմքերի բացակայության դեպքում, քրեական գործը կարճելու համար, ապա չի կարել այդպիսի արարքը ճանաչել կաշառքի շորթում:

Իրավաբանական գրականության մեջ կաշառքի շորթման հասկացության առումով միասնականություն չկա: Ռուսական գիտնականների մեծ մասը պաշտպանում են ՌԴ գերագույն դատա-

րանի պլենումի վեկոնշյալ որոշման մեջ շորթման սահմանումը՝ համարելով այն միանշանակ ճիշտ [7 էջ 13, էջ 606]:

Մյուս կողմից՝ մի շարք հեղինակներ գտնում են, որ անհրաժեշտ է կաշառքի շորթման հասկացությանը տալ առավել լայն մեկնաբանություն՝ առաջարկելով հետևյալ սահմանումը «դա պահանջ է պաշտոնատար անձի կողմից տալ իրեն կաշառք կաշառատուի համար որևէ ոչ շահեկան արարք կատարելու սպառնալիքով, անկախ նրանից, թե կաշառատուի շահերը օրենքով պահպանվող են, թե՛ ոչ» [8 էջ 100]:

Նման մեկնաբանությունը, սակայն, կարծում եմ ոչ ճիշտ: Այն նաև հակասում է «շորթման» տերմինի ընդանուր հասկացությանը: Բացի դրանից՝ նման մոտեցումը արդյունքում կբերի քրեական օրենքով նախատեսված կաշառք տալու համար քրեական պատասխանատվությունից ազատման խրախուսական նորմի անհարկի կիրառման դեպքերի:

Ինչպես տեսանք՝ պրակտիկայում հանդիպում են շորթման դեպքեր, երբ պաշտոնատար անձը կաշառատուի օրինական շահերին վնաս պատճառելու սպառնալիքով կատարում է անօրինական գործողություններ: Նման արարքի որակման հարցում ճիշտ կլինի առանձնացնել կաշառքի շորթումը և պաշտոնատար անձի կողմից անօրինական գործողություններ կատարելը, այսինքն՝ արարքը որակել համակցությամբ 308-րդ և 311-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նշենք, որ ՀՀ քրեական օրենսգիրքը ոչ իրավաչափ առավելության ոչ բոլոր պահանջներն է համարում շորթում և օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ի մասի դիսպոզիցիայում միայն ոչ իրավաչափ առավելության պահանջը պաշտոնատար անձի կողմից ի օգուտ կաշառատուի կամ նրա ներկայացրած անձի գործողություն կատարելու կամ չկատարելու համար, համարվում է ավարտված հանցագործություն: Ի դեպ, գործողություն

կամ անգործությունը կարող է լինել թե՛ ծառայողական լիազորությունների շրջանակում, թե՛ դրանց բացակայությամբ: Այնուամենայնիվ, օրենքը որևէ տարբերակման չափանիշ չի սահմանել: Ի վերջո, պահանջն իր բովանդակությամբ կարող է առաջարկի ձևով հնչել կամ տարբեր անհատակ ձևերով, որի մասին արդեն վերը նշեցի:

Այժմ անդրադառնանք հասարակ կաշառքի և կաշառքի շորթման առանձնահատկություններին: Կաշառքի շորթումը, ի տարբերություն առաջինի, պետական իշխանության հեղինակության հետ միաժամանակ ունեցություն է նաև մարդու սահմանադրական իրավունքների և օրինական շահերի նկատմամբ: Մինչև նույն ժամանակ, շորթման պարագայում պաշտոնատար անձը, փաստացի, ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն է կատարում՝ արդյունքում նրան պատճառելով վնաս:

Անձը, ի տարբերություն ավանդական կաշառակերության, խնդիր ունի կանխելու իր իրավունքների և օրինական շահերի խախտումը կամ խախտման վտանգը: Կաշառքի շորթման դեպքում, կատարվող գործողությունները միշտ «անօրինական» են, կաշառքի ստացման համար նախաձեռնությունը միշտ պաշտոնատար անձին է, «կաշառատուն» գործում է ճնշումների տակ, այս արարքը չի կրում գործարքային բնույթ, ինչպես դա լինում է հասարակ կաշառքի ստացման պարագայում:

Վերոգրյալից ելնելով՝ հարց է ծագում՝ «արդյո՞ք կաշառքի շորթումը կարող է տեղավորվել «կաշառակերության» հասկացության շրջանակում»: Այս հարցին միանշանակ պատասխանելը դժվար է, սակայն, կարծում եմ, որ քրեական օրենքի արդարության սկզբունքներից ելնելով՝ նպատակահարմար է տարբերակված մոտեցում դրսևորել կաշառքի շորթման և «հասարակ» կաշառքի հասկացությունների միջև՝ նախատեսելով դրանց համար պատաս-

խանատվության տարբեր սկզբունքներ: Կաշառքի շորթումը նույնպես պետք է դիտել որպես կոռուպցիոն հանցագործություն: Այն հանրության համար առավել բարձր վտանգավորություն ունի, ուստի և պատժողական քաղաքականության առումով առավել խիստ մոտեցում է պետք ձևավորել: Այս հանցագործության դեպքում ոչ իրավաչափ առավելություն տրամադրելը ոչ թե արհեստականորեն պետք հանդես գա «կաշառատու»՝ հանցագործություն կատարող անձ, իսկ հետո քրեական օրենքի համապատասխան խրախուսական նորմի կիրառմամբ, լուծվի նրան պատասխանատվությունից ազատելու հարցը, այլ ֆիզիկական անձ, որին հանցագործությամբ գույքային կամ ոչ գույքային վնաս է պատճառվել: Սրանով ինքնաբերաբար, իրավաչափորեն կլուծվի կաշառքի շորթման դեպքերով ոչ իրավաչափ առավելություն տրամադրողին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնախնդիրը, այն տեսանկյունից, որ այդպիսի հարց այլևս չի առաջանա, քանի որ կոնկրետ հանցագործության դեպքով տվյալ անձը միանշանակ հանդես կգա որպես տուժող:

Կաշառքի շորթման դեպքերով տուժողը պետք է գիտակցի, որ համապատասխան պահանջ ներկայացնող պաշտոնատար անձին ոչ իրավաչափ առավելություն է տրամադրում՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով: Եթե անձը չի գիտակցել, որ իր նկատմամբ պաշտոնատար անձի կողմից շորթմամբ կաշառք է պահանջվել, այլ խաբեության կամ մոլորության կամ չինացության արդյունքում վստահ է եղել, որ, այնուամենայնիվ, ոչ իրավաչափ առավելություն է տրամադրում ի օգուտ իրեն կամ այլ անձի գործողություն կատարելու կամ չկատարելու դիմաց՝ հաստատ հանդգնած լինելով, որ այլապես օբյեկտիվորեն չէր կարող հավակնել դրան, ապա, այս դեպքում, նրա արարքում առկա է կաշառք տալու փորձի հանցակազմը,

քանի որ առաջին՝ անձը գիտակցաբար ունեցնում է կատարել պետական ծառայության հեղինակության դեմ, երկրորդ՝ նրա համար ոչ իրավաչափ առավելություն ստացողը, կաշառակերության հասկացության առումով, վեր է ածվում «կարծեցյալ» պաշտոնատար անձի: Սակայն, կոնկրետ կատարած արարքի մասով նշյալ պաշտոնատար անձը պետք է պատասխանատվություն կրի կաշառքի շորթման համար:

Կաշառքի շորթումը պետք է ավարտված համարվի համապատասխան ոչ իրավաչափ առավելության տրամադրման պահանջի ներկայացման պահից, որը խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը կամ այնպիսի գործողությունների կատարումը, որոնք անձի առաջ դնում են այնպիսի անբարենպաստ պայմաններ, որի պարագայում նա ստիպված է կաշառք տալ իր՝ օրենքով պահպանվող շահերին հասց-

վող վնասակար հետևանքների առաջացումը կանխելու նպատակով:

Ահա այն հանգամանքները, որոնց հիման վրա կարծում են, որ ՀՀ քրեական օրենսգրքում, որպես առանձին հանցագործության տեսակ, անհրաժեշտ է ամրագրել (սահմանել) «կաշառքի շորթում» հասկացությունը հետևյալ բովանդակությամբ՝ «կաշառքի շորթումը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի կողմից ոչ իրավաչափ առավելություն տրամադրելու պահանջը այնպիսի սպառնալիքով, որը կարող է վնաս պատճառել անձի սահմանադրական իրավունքներին և օրինական շահերին կամ դիտավորյալ անձին առաջադրել այնպիսի պայմաններ, որի պարագայում նա ստիպված է ոչ իրավաչափ առավելություն տրամադրել իր իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումը կանխելու նպատակով, պատժվում է...»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քրեական օրենսգիրք, 2003թ.:
2. Российское законодательство X–XX веков. Т.6. Законодательство первой половины XIX века. – М., 1988г.:
3. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 2002թ.:
4. <http://xn--b1azaj.xn--p1ai/2000/postanovlenie-plenuma-vs-rf/N06-ot-10.02.2000.html>
5. Комментарий к УК РФ под общей редакции доктора юридических наук В.М.Лебедева 2005г.
6. Դատական գործ N ԵԱՆԴ01/0104/01/09:
7. Воложенкин Б.В Постановление Пленума Верховного Суда РФ «О судебной практике по делам о взяточничестве и коммерческом подкупе» 2000 г., А.И.Парога Учебник уголовного правдо России, 5–е издание, Москва 2006г..
8. Медведев А.М.Вымагательство взятки /Государство и право 1996г. N 8.

УГОЛОВНО–ПРАВОВАЯ ОЦЕНКА ВЗЯТКИ С ВЫМОГАТЕЛЬСТВОМ И ОСОБЕННОСТИ КВАЛИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЯ

ГАЙК ИСРАЕЛЯН

*Ереванский государственный медицинский университет
им. Мхитара Гераци, группа медицинского права, преподаватель*

Статья посвящена проблемам квалификации преступления, связанного с получением должностным лицом взятки с вымогательством, предусмотренного УК РА. Автор проанализировал некоторые вопросы уголовно–правовой оценки данного преступления, в диспозициях которого, по мнению автора, необходимо произвести изменения, учитывая тот факт, что оно совершается специальными субъектами.

CRIMINAL–LEGAL ASSESSMENT OF BRIBES WITH EXTORTION AND
CHARACTERISTICS OF CRIME QUALIFICATIONS

HAYK ISRAELYAN

Yerevan State Medical University after Mkhitar Heratsi, Health Law Group, Lecturer

The article deals with qualification problems of crime associated with bribetaking with an extortion by an official under the RA Criminal Code.

The author analyzes some issues of criminal and legal assessment of the crime, considering in the dispositions of which, according to the author, it is necessary to make changes, the fact that it is done by special subjects.